ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ 111
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «04» «03» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, և «**Ա. Իսահակյանի տուն-թանգարան**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ա. Խորենյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել «Բաժանորդային համակարգի ներդրում» ծրագրի շրջանակներում 2021 թվականի երկրորդ կիսամյակի ծախսերի փոխհատուցմանը՝ համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 23-ի N 326-Ա/2 հրամանով հաստատված ծրագրի և պայմանագրի անբաժանելի մաս կազմող հաշվարկի (Հավելված):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11005.Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման «Բաժանորդային համակարգի ծրագիր» տողով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.2-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.2.3. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.2-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված աշխատանքի մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է հաշվարկի Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (հաշվարկի

ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը՝ կցելով էլեկտրոնային կրիչներ՝ լուսանկարներ, հրավիրատոմսեր և այլն),

2.3.4. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկույթ՝ աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.5. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածի համաձայն կնքել գումարի փոխհատուցման պայմանագրեր նշված կազմակերպությունների հետ, բացառությամբ «Ա. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի հետ:

2.4. *Կատարողը իրավունք ունի՝*

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 9924.5 հազար (ինը միլիոն ինը հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները):

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 8270.4 հազար դրամը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 1654.1 հազար դրամ գումարը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի գանձապետական հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1.-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է ընդունման-հանձնման արձանագրություն:

4.2. Մինչև Պայմանագրի 1.1.-ին կետում նշված աշխատանքների ընդունման- հանձնման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը

պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով:

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1.-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի ապրիլի 15-ն է:

6.2. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրը կազմված է 5 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

8.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Ա. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ՀՀ, ք. Երևան, Զարոբյան 20
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	հ/հ 900018001439 ՀՎՀՀ 00021944
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732	հեռ. (010) 562-424
Պատվիրատուի ստորագրությունը	տնօրեն՝ Ա. Խորենյան
Գլխավոր քարտուղար՝ Գ. Սաֆարյան	Կ.Տ.
Կ. Տ.	

Հավելված
01.03.2022 թ.
N 111 պայմանագրի

Հաշվարկ
աբոնեմենտային ծրագրի 2021 թվականի երկրորդ կիսամյակի
ծախսերի փոխհատուցման (թանգարաններ)

N	Կազմակերպության անվանումը	Աշակերտների քանակ	Ուսուցիչների քանակ	Ընդհամենը	Հատկացվող գումարը (հազ. դրամ)
1	«Մատենադարան. Մ. Մաշտոցի անվան հնագույն ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ	1897	187	2084	625,2
2	«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ	348	31	379	113,7
3	«Դիլիջանի երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ	140	17	157	47,1
4	«Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային	628	44	672	201,6
5	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ /Ձիթողցյանների տուն/	1301	62	1363	408,9
6	«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թագարան ՀՈԱԿ-ի կազմում գործող «Գյումրու պատմության թանգարան»	202	0	202	60,6
7	«Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան» ՀՈԱԿ	764	98	862	258,6
8	«Մեր Մկրտչյան թանգարան» ՀՈԱԿ	2230	174	2404	721,2
9	«Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» ՀՈԱԿ	125	10	135	40,5
10	«Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» ՀՈԱԿ	2063	121	2184	655,2
11	«Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ	787	42	829	248,7
12	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ	1013	0	1013	303,9
13	«Ն. Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարան» ՊՈԱԿ	297	32	329	98,7
14	«Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ	125	0	125	37,5
15	«Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն» ՊՈԱԿ	184	18	202	60,6
16	«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ (Արա Սարգսյանի և Հակոբ Կոջոյանի տուն-Թանգարան, Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարան, Մեր Աբեղյանի թանգարան, Էջմիածնի պատկերասրահ, Հրաչյա Բունիաթյանի անվան Գավառի պատկերասրահ, Եղեգնաձորի պատկերասրահ, Ջերմուկի պատկերասրահ, Ալավերդու պատկերասրահ, Մինաս Ավետիսյանի թանգարան, Մարտունու պատկերասրահ)	619	39	658	197,4
17	«Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ և մասնաճյուղեր (Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան, Ս. Կապուտիկյանի տուն-թանգարան, Պ. Պռոշյանի տուն-թանգարան)	3026	209	3235	970,5
18	«Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ	392	28	420	126
19	Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն («Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարան, «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան, «Ամբերդ ամրոց» պատմամշակութային արգելոց, «Լոռի բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոց)	1117	74	1191	357,3
20	«Եղիշե Չարենցի տուն-թանգարան» ՊՈԱԿ	537	66	603	180,9

	«Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ	36	3	39	11,7
23	«Ս. Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ	252	15	267	80,1
24	«Ավ. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	666	56	722	216,6
25	«Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Արրահամյանի հավաքածու)» ՊՈԱԿ	34	2	36	10,8
26	«Հովհաննես Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ	3855	186	4041	1212,3
27	«Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	292	17	309	92,7
28	«Օրբելի եղբայրների տուն-թանգարան» ՊՈԱԿ	501	46	547	164,1
29	«Հրազդանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	48	2	50	15
30	«Խ. Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	86	10	96	28,8
31	Կոմիտասի թանգարան -ինստիտուտ» ՊՈԱԿ	381	21	402	120,6
32	«Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ	109	9	118	35,4
33	«Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	221	13	234	70,2
34	Հայաստանի ազգային գրադարանի գրատպության թանգարան	25	2	27	8,1
35	Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարան	273	26	299	89,7
36	«Մ. Սարյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	378	18	396	118,8
37	«Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	43	5	48	14,4
38	«Ստ. Զորյանի տուն-թանգարան» ՀՈԱԿ	183	11	194	58,2
39	«Կառլոս Աբովյանի անվ. կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ	165	7	172	51,6
40	«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ	209	14	223	66,9
41	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	88	10	98	29,4
	Ընդամենը՝	**25829**	**1739**	**27568**	**8270,4**
	ԱԱՀ*				**1654,1**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**9924,5**

** **ԱԱՀ-ի** գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես **ԱԱՀ**, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011032878 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Ա. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Զարոբյան 20
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001439 ՀՎՀՀ 00021944
հեռ. (010) 562-424
տնօրեն՝ **Ա. Խորենյան**
Կ.Տ.